ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ РЕГИОН
ВОСКЕАТСКОЕ СЕЛЬСКОЕ
УПРАВЛЕНИЕ

N 01-207

«03» 07 2018թ.

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Գ .Միրիջանյան

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի կողմից 2018 թվականի հունիս ամսվա ընթացքում արձակված կարգադրությունները և ընդունված որոշումները:

Առդիր՝ 5 թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր՝ Գ. Ներսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

<<26>> հունիսի 2018 թ. թիվ 10-Ա

ԱՐՏԱՎԱԶԴ ԱՎԱԳՅԱՆԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼ ՀԱՍՑԵԻ ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Արտավազդ Ավագյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքում գտնվող, քաղաքացի Արտավազդ Ավագյանի սեփականության իրավունքով պատկանող գ. Ոսկեհատ հասցեում գտնվող, (ծածկագիր 029-018) 0,0731 հեկտար բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից առանձնացված 0,0334 հեկտար հողամասին և շինությանը (համաձայն հատակագծի) տրամադրել հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի գյուղ Ոսկեհատ Սայաթ- Նովա փողոցի 1/1 հասցեն, իսկ 0,0397 հեկտար հողամասին և շինությանը (համաձայն հատակագծի) թողնել Սայաթ- Նովա 1 հասցե:

2. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Արմավիրի մարզային ստորաբաժանման կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ ընդունման պահից:

Ոսկեհատ համայնքի
ղեկավար՝ Գ. Ներսիսյան

2018 թվականի հունիսի 26

գ.Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

«27» հունիսի 2018 թ.. թիվ 11-Ա

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի <<Ազդարարման համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 2018թ. հունիսի 19-ի թիվ 01/02.1/2186-18 գրությունը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. թիվ 272-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքում ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ նշանակվել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի փոխարինող Մարինե Գյուրջյանին:

2. ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձին Մարինե Գյուրջյանին, ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաշվառումը և ձևակերպումը իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. մարտի 15-ի թիվ 272-Ն որոշմամբ հաստատված կարգով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ ընդունման պահից:

Ոսկեհատ համայնքի
ղեկավար Գ. Ներսիսյան

2018 թվականի հունիսի 27

գ.Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2018 թվականի N/2Ա

ԱՆՆԱ ՌՈՍՏՈՄՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի բնակիչ Աննա Ռոստոմյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի բնակիչ Աննա Ավագի Ռոստոմյան ծնված (23.02.1971թ.) սեփականության իրավունքով պատկանող ժառանգության վկայագիրը N 1953 0116-0010 կադաստրային համարով 0.18 հա վարելահողին կից նրա կողմից փաստացի ավել օգտագործվող 0.036 հա վարելահողը ճանաչել Աննա Ավագի Ռոստոմյանի սեփականության իրավունքը:
2. Գյուղատնտեսական նշանակության 0.18 հա վարելահողին կից, ի սկզբանե Աննա Ավագի Ռոտոմյանի կողմից փաստացի ավել օգտագործվող, 0.036հա վարելահողը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում:
3. Չեղյալ համարել 15.05.2018 N 8-Ա որոշումը:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Գ. ՆԵՐՍԻՅԱՆ

2018թ. հունիսի «28»
գ. Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

01 հունիսի 2018 թ N 12-Ա

ՈՍԿԵՀԱՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱՅԻ ՏՆՕՐԵՆ ՍՐԲՈՒՀԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158- րդ , 159- րդ և 164- րդ հոդվածներով և հիմք ընդունելով Սրբուհի Սիմոնյանի դիմումը .

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի բժշկակական ամբուլատորիայի տնօրեն Սրբուհի Սիմանյանին հատկացնել իրեն հասանելիք 2018 թվականի հերքական արձակուրդը 2018 թվականի հունիսի 1-ից՝ մինչև հուլիսի 2-ը՝ 22 աշխատանքային օր տևողությամբ: Աշխատանքի մեջ համարել 2018 թվականի հուլիսի 3–ից:
2. Տնօրենի պարտականությունները արձակուրդի ընթացքում դնել Իսկուհի Խաչատրյանի վրա:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր՝ Գ. Ներսիսյան

2018 թվականի հունիսի 01
գ. Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

01 հունիսի 2018 թ N13 -Ա

ԵՊՐԱՔՍԻԱ ԵՂԻՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 112 –րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Եպրաքսիա Եղիյանին 2018 թվականի հունիսի 1-ի դիմումը՝

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2018 թվականի հունիսի 1-ից Եպրաքսիա Եղիյանին ազատել Ոսկեհատի համայնքապետարանի ակումբի վարիչի պաշտոնից համաձայն իր դիմումի

2. Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ (Գայանե Տեր- Խաչատրյան)՝ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ :

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից :

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր՝ Գ. Ներսիսյան

2018 թվականի հունիսի 1
գ. Ոսկեհատ